Արձանագրություն N 2
ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 նոյեմբերի 2021թ
ժամը 10:15

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Սողոմոն Մաթևոսյանը
անդամներ՝ Հասմիկ Ղուլյանը, Մանուշակ Գրիգորյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի բացման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա/ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	*Մասնակցի անվանումը*		*Մասնակցի հասցեն և կապի միջոցները*
1	2		3
1	«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ*	-	ք. Երևան, Սասունցի Դավթի 70/1շ. Բն.1, հեռ. 094444802, hardendsoft@mail.ru
2	«Յասոն» ՍՊԸ	-	Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4, հեռ. 091 40 77 04, Yason@web.am
3	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ	-	Ք. Երևան Ծ. Իսակովի 48/2, հեռ. 010 726 726, astghik59@gmail.com
4	«Ֆորտունա սիթի» ՍՊԸ*	-	ք. Գորիս, Տաթևացու 31/1 հեռ. +37494431563, fortunasity@mail.ru
5	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ	-	ք. Երևան, Մաշտոցի 50ա/1, հեռ. 091207192,
6	Աննա Սահակյան ԱՁ*	-	ք. Երևան, Ֆանարջյան Փ./Տ/37, հեռ. 37477447754, atsgnumner@gmail.com

***Մասնակիցը ԱԱՀ վճարող չէ**

բ/ Մասնակիցների կողմից աճուրդի ամփոփման ժամկետի ավարտին առաջարկված գները հետևյալն են.

Հ/Հ	Մասնակցի	
	անվանումը	առաջարկած գինը առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)
1	2	3
1	«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ*	427000
2	«Յասոն» ՍՊԸ	4320000
3	«Աստղիկ Գրատուն» ՍՊԸ	4590000
4	«Ֆորտունա սիթի» ՍՊԸ*	5034000
5	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ	5232500
6	Աննա Սահակյան ԱՁ*	6900000
նախահաշվային պլանավորված գինը (ՀՀ դրամ)		3240000

գ/ Գնման առարկայի բնութագրերի հիմնավորումներ չեն ներկայացվել, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

դ/ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ուղարկել է գրություն ուղղված գնահատող հանձնաժողովին, որով ներկայացնում է բացատրություններ իր կողմից աճուրդին մասնակցելու և գնային առաջարկի մուտքագրման ժամանակ թույլ տրված տեխնիկական սխալի արդյունքում այլ գնային առաջարկ մուտքագրելու վերաբերյալ և ներկայացրել է հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով տպագրության աշխատանքի կատարման գնի ինքնարժեքի և գնի հիմնավորման վերաբերյալ հաշվարկ (գրությունը կցում է):

II. Հայտերի գնահատման մասին

(Սողոմոն Մաթևոսյան)

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից հանձնաժողովին ուղղված դիմումը, ներկայացրած հայտը և արձանագրեց, որ.

ա/ բոլոր մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ բացառությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի գնային առաջարկի:

բ/ բացառությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտի, էլեկտրոնային (eauction.armeps.am) աճուրդի համակարգի կողմից մերժվել է բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ հետևյալ հիմնավորմամբ, առաջարկված գինը գերազանցում է գնման հայտով սահմանված նախահաշվային գինը:

գ/ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության մեջ (հավելված 1) գրված Ընկերության հայերեն անվանումը չի համապատասխանում ներկայացված հայտարարագրի 1.1.1 կետում նշված Ընկերության հայերեն անվանմանը, հավելված 1.2-ում «Էլեկտրոնային աճուրդի հրավերի» բառերի փոխարեն գրված է «գնանշման հարցման հրավերի» բառերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3 Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով վերոգրյալը և հրավերի 8.9 և 8.11 կետերով սահմանված պահանջները, որոշեց.

ա/ մերժել «Յասոն» ՍՊԸ-ի, «Աստղիկ Գրատուն» ՍՊԸ-ի, «Ֆորտունա սիթի» ՍՊԸ-ի, «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի, Աննա Սահակյան ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերը հրավերի 8.9 կետով սահմանված պահանջի համապատասխան:

բ/ հրավերի 8.11 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով տեղեկացնել «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

գ/ ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. նոյեմբերի 16-ին ժամը 11.40-ին ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ս. Մաթևոսյան

անդամներ՝ _____ Հ. Ղույյան

_____ Մ. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան 12 նոյեմբերի 2021թ.

ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով տպագրության աշխատանքների գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ս. Մաթևոսյանս, անդամներ՝ Հ. Ղուլյանս, Մ. Գրիգորյանս հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ջանջուղազյանս նշված ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ս. Մաթևոսյան

անդամներ՝ _____ Հ. Ղուլյան

_____ Մ. Գրիգորյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան

«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ

ՀՀ, 375008 ք. Երևան, Սասունցի Դավթի 70/1 շ. բն. 1 հեռ. 094 444-802

Ա.Դ 2021-7 <<11>> <<11>> 2021թ.

«ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով
Էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի հանձնաժողով

<<Հարդ ընդ Սոֆթ>> ՍՊԸ-ն 11.11.2021թ.-ին մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության կողմից հայտարարած «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Էլեկտրոնային աճուրդին: Աճուրդի մասնակցության սկզբնական գինը Ընկերության կողմից եղել է 5280000 (հինգ միլիոն երկու հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ: Աճուրդի մեկնարկային գինը սահմանվել է 4320000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Աճուրդը սկսվելուց հետո գնի նվազեցման քայլի մինիմալ շեմը սահմանվել է 4270000 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը: Ընկերությունը հաշվարկել է և ցանկացել կատարել աճուրդի գնի նվազեցման քայլի մինիմալ շեմի չափով քայլ՝ **4270000**դրամ, սակայն տեխնիկական պատճառով մեկ 0 նիշը պակաս է մուտքագրվել համակարգ և Ընկերության կողմից ներկայացված գինը 4 270 000դրամի փոխարեն ստացվել է 427 000դրամ:

Խնդրում եմ <<Հարդ ընդ Սոֆթ>> ՍՊԸ կողմից 11.11.2021թ-ի «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Էլեկտրոնային աճուրդին ներկայացված գինը 427 000 (չորս հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամի փոխարեն կարդալ 4270000 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Որպես հիմնավորում գնի նվազեցման տեխնիկական պատճառի (վրիպակի) ներկայացնեմ, որ 60 000 հատ Կենսաթոշակի գործի կազմի տպագրության համար պահանջվում է 3150կգ. Futbort թուղթ, որի մեկ կիլոգրամի արժեքը 1100դրամ է: Այսպիսով 3150կգ.x1100դր.=3 465 000դր.: (սա միայն թղթի մասով, դրան գումարվում է նաև այլ տպագրական ծախսեր՝ ներկ, ֆորմաներ, էլ. էներգիա, աշխատավարձ և այլն):

Որպես հիմնավորում ներկայացնեմ նաև հետևյալ հանգամանքը.

Ընկերության կողմից աճուրդի մասնակցության սկզբնական գինը ինչպես նշեցի **5280000**ՀՀ դրամ էր և տրամաբանական չէ **5 280 000**դրամից մեկ քայլով նվազեցնել մինչև **427 000**դրամ: Նշեմ նաև, որ երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի նվազագույն գինը՝ **4 320 000** դրամ է, երրորդ տեղինը՝ **4590000**դր, չորրորդ տեղինը՝ **5034000**դր, հինգերորդ տեղինը՝ **5232500**դր, վեցերորդ տեղինը՝ **6900000**դր:

ԿԻց ներկայացնում եմ «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Էլեկտրոնային աճուրդի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝ e-auction ծրագրից արտատպված:

Հարգանքով՝

<<Հարդ ընդ Սոֆթ>> ՍՊԸ տնօրեն Ալինա Դանիելյան _____

Digitally signed by
DANIELYAN ALINA
6002680209
Date: 2021.11.11 16:14:10